««ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ճարտարապետական գործունեության մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-235-Ն օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 14-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Ճարտարապետի մասնագիտական գործունեության արտոնագիր ստանալու համար կարող են դիմել հայերենին տիրապետող, ճարտարապետություն մասնագիտությամբ բարձրագույն կրթությամբ այն անձինք, ովքեր ունեն.

1) մագիստրոսի աստիճան և գերազանց ուսումնական առաջադիմությամբ շրջանավարտի դիպլոմ կամ

2) մագիստրոսի աստիճան ու ճարտարապետի մասնագիտությամբ առնվազն երկու տարվա աշխատանքային փորձառություն կամ

3) բակալավրի աստիճան ու ճարտարապետի մասնագիտությամբ հինգ տարվա աշխատանքային փորձառություն:»:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Ճարտարագետ-կոնստրուկտորի մասնագիտական գործունեության արտոնագիր ստանալու համար կարող են դիմել հայերենին տիրապետող, ճարտարագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթությամբ այն անձինք, ովքեր ունեն.

1) մագիստրոսի աստիճան և գերազանց ուսումնական առաջադիմությամբ շրջանավարտի դիպլոմ կամ

2) մագիստրոսի աստիճան և ճարտարագիտություն մասնագիտությամբ առնվազն երկու տարվա աշխատանքային փորձառություն կամ

3) բակալավրի աստիճան ու ճարտարագիտություն մասնագիտությամբ հինգ տարվա աշխատանքային փորձառություն:»:

Հոդված 3.

1) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն և «Հայաստանի Հանրապետության ճարտարապետների պալատ» ինքնակարգավորվող կազմակերպությունը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում ապահովում են սույն օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի ընդունումը:

3) Սույն օրենքի դրույթները գործում են սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական ակտերն ուժի մեջ մտնելու պահից: